

ւատը մի միայն դործունէութեան մէջն է արտայայտուում. անհասներին այդ սեղութեամբ կրթելը նրանց դարձնում է աղատ և մղում այլոց ծառայելու. հասարակութեան մէջ և հասարակութեան օգտին գործելու:

Անհատի այս տեսակ դարգացումն և քրիստոնէական սկզբունքների իրագործումը կեանքի բոլոր ասպարէզներում նա անհրաժեշտ պայման էր համարում բողոքական եկեղեցու համար:

Երկրորդ զեկուցման մէջ հեղինակն այն միտքն էր արծարծում, որ բանւորական բարեկեցութեան միջոցը կայանում է ոչ թէ ընկերվարական—աամիւնարների քարոզած դասակարգային կռուի մէջ, այլ բանւորներին խաղաղ աշխատանքով և իրենց իսկ մասնակցութեամբ քրիստոնէական սկզբունքներով բարձրացնելու մէջ. որովհետեւ դասակարգային կռիւը մի միայն մեծացնում է հակադրութիւնը: Այդպիսի աշխատանքը և բանւորներին բարձրացնելը միայն նպատակ ընտրեց «Քրիստոնէական Բանւորական Շարժումը», որը Ֆրանկֆուրտի համաժողովում անցեալ տարուայ հոկտեմբեր ամսին հրաժարուեց դասակարգային կռիւ մղելու սկզբունքներից: Որպէս զի այդ շարժումն յաջողութիւն ունենայ, նա, դասակասի կարծիքով, չը պէտք է շեղուի իւր հիմունքից—քրիստոնէութիւնից և անտեսական բարւոքման հետ պէտք է ձգտի և կրօնական, մտաւոր և բարոյական յառաջադիմութեան: Այդ համաժողովի դանազան մասնախմբերը քննութեան առին անբարոյական գրականութեան խնդիրը և նրա քայքայող ազդեցութիւնը ժողովրդական կեանքի վրայ. «ինչ հետևանքներ կունենար, եթէ կրօնական դաստիարակութիւնը փոխարինէին բարոյական օրէնքների դասաւանդութեամբ» և այլն: Քրիստոնէական բանւորական շարժման համար հմուտ ղեկավարներ պատրաստելու նպատակով որոշուեց ներկայ ամառը Բերլինում վեցշաբաթեայ յատուկ դասընթացներ սահմանել, որտեղ ունինգիւրները կարող պէտք է լինեն ծանօթանալու տեսականապէս և գործնականապէս ընկերվարականութեան ամենաէական հարցերի և ներկայ ժամանակի յարուցած խնդիրների հետ:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանսիայի և կաթոլիկ հոգևորականութեան մէջ առանց այն էլ լարուած դրութիւնն առաւել վատացաւ հասարակա-

պետութեան նախագահ Լուրէի Հոովմ գնալով: Վատիկանի սովորական դարձած արագիցեաները (կարգերը) թոյլ չէին տալին որ կաթոլիկ թագաւորներն Հոովմ այցելէին, որովհետեւ այդպիսով նրանք ընդունած կլինէին Հոովմում գոյութիւն ունեցող դրութիւնը: Ի միջի այլոց այդ ենթադրութիւններին պիտի հնազանդուէր նաև Աւստրիայի կայսրը: Կաթոլիկական հանրապետութեան գլուխ Լուրէն չուզեց ի նկատի առնել պապի զգացմունքներն և վճռեց այցելել իտալական թագաւորին իւր մայրաքաղաքում: Լուրէին Հոովմում ցոյց տուած ջերմ ընդունելութիւնը կաթոլիկաց ռիտերիմ թշնամիներին՝ մասոններէ կողմից և հակակղերական ցոյցերը Հոովմի ամբոխի կողմից Վատիկանի դէմ Լուրէի այնտեղ եղած ժամանակ առանձնակի ընդդէմեցին այդ այցելութեան հակաբարեկամական ընաւորութիւնը պապի դէմ: Վատիկանի օրդան «Osservatore Romano»-ում շուտով լոյս տեսաւ մի նկատողութիւն, «որ ս. Յ. թոռը Լուրէի դալը համարում է ծանր վիրաւորանք իւր իրաւունքներէ և արժանապատուութեան դէմ» և եռանդուն բողոք ուղարկուեց Ֆրանսիական կառավարութեան, որի մասին իւր ներկայացուցիչներին միջոցաւ պապը տեղեկութիւն տուաւ այն բոլոր կառավարութիւններին, որոնց հետ անմիջական յարաբերութիւններ ունի»:

Սակայն Ֆրանսիական կառավարութիւնը մերժեց ընդունել այդ բողոքը պապի ստատուսեկրետերի (աւագ-քարտուղարի) ձեռքից և մասնանշ եղաւ Դէլկասէի պալատում արած բացատրութեան վերայ, թէ «հասարակապետութեան նախագահ Լուրէի ճանապարհորդութիւնը ոչ որք համար ոչ մի վիրաւորական բան չի բովանդակում: Իսկ Վատիկանի պետութիւններին արած դիմումի մէջ նա տեսնում է վիրաւորանք իրեն հասցէին, որի պատճառով էլ մտադրուում է յետ կանչել պապական աթոռի մօտի իւր ներկայացուցիչն և խղել պապի հետ ունեցած յարաբերութիւնները»:

Վերջին տեղեկութիւնները համաձայն Ֆրանսիական հասարակապետութեան պապի մօտի ներկայացուցիչն արդէն յետ է կանչուած Հոովմից և մօտերումս Ֆրանսիական պարլամենտին կառաջարկուի եկեղեցին պետութիւնից անջատելու օրինագիծը, որից Վատիկանը մեծ նիւթական և բարոյական վնասներ կարող է կրել:

Եւրոպայի միջոցաւ Վատիկանի հետ յարաբերութիւնները շարունակուած են իւր անփոփոխութեամբ: Եւրոպայի միջոցաւ Վատիկանի հետ յարաբերութիւնները շարունակուած են իւր անփոփոխութեամբ: Եւրոպայի միջոցաւ Վատիկանի հետ յարաբերութիւնները շարունակուած են իւր անփոփոխութեամբ:

Պիոս X պապը՝ իրեն նպատակ դնելով եկեղեցական կեանքի վերանորոգութիւնը՝ ամենից առաջ ուշադրութիւն դարձրեց իւր սեփական թեմի վրայ և լուրջ կերպով սկսեց զբաղուել՝ կարգի բերելով նախ այդ թեմը: (Motu proprio) կոնդակով փետրվարի 11 ից նա նշանակեց «Առաքելական այցելութիւններ» և յանձնարարեց այդ գործն իւր գլխաւոր կարգինաւ Ռէսպլիզին, որին օգնական նշանակեց մի քանի բարձրաստիճան հոգևորականների: Այցելուները ապրիլի 10 ից սկսել են բոլոր կաթողիկէ եկեղեցիներին, վանքերի միաբանութիւններին և եղբայրութիւններին բազմակողմանի քննութիւնը, եկեղեցական զարդերի և սեփականութեանց ցուցակադրութիւնը և սաացած հրահանգի համաձայն պարտաւոր են նաև ուշադրութիւն դարձնել եկեղեցական արարողութիւնների և հոգևորականութեան վարք ու բարքի վրայ: Նոցա իւր ուղեցոյց տրուած է մանրամասն ձեռնարկ: Այդ ձեռնարկութեան յաջող կատարման համար սահմանուած է առանձին ազօթք և հանդիսաւոր կերպով սեղանի վրայ պիտի դրուի նաև սրբութիւնը: Կարգինալին իրաւունք է տրուած իւր այցելած եկեղեցիներում «ինդուլգէնցիա» (մեղաց թողութիւն) յայտարարելու:

Այս այցելութիւններն երևի պայլին մեծ հնարաւորութիւն կան ընդարձակ բարեփոխութիւններ մտցնելու իւր եկեղեցում:



ՎԱԳՆՐՇԱՊԱՏԸ ԵՒ Ս. ԷԶՄԻԱՇԻՆԸ ԻՐԵՆՅ ՍԿԶԵՆԱԿԱՆ
ՏԵՂՈՒՄՆ ԵՆ:

II

«Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝
փշրեացի, և յոյր վերայ անկցի՝ հոսեցէ զնա»
(Աւեա. Մատ. ԻԱ. 44):

Իմ նախորդ յօդուածը (տես «Տարազ» № 22) գրել էի «Մշակի» № 105 լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ՝ «հին վաղարշապատ» խօսքի դէմ: Այն յօդուածս դեռ